**Արձանագրություն N3**
**<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա>> ծածկագրով գնանշման հարցման**
**ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 10.01.2019թ.

**Մասնակցում էին՝**
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Մխիթարյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Օհանջանյանը, Ա. Մարգարյանը և Ա. Սիմոնյանը,
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը,

## 1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Օրակարգ՝**

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Բիդեք>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Բիդեք>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվության վերաբերյալ:

**Քննարկումների ընթացքում նշվեց, որ.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.12.2018թ. տրամադրվել է եզրակացություն, որը համապատասխանում է հրավերի 2.5 կետով սահմանված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշներին:

2. <<Բիդեք>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Հավելված 5.2-ով ներկայացված՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների մասին տեղեկանքում ներկայացված Խաչիկ Նորեյանի որակավորումը չի համապատասխանում հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորմանը՝ ինժեներ-շինարար՝ ջրամատակարարման և ջրահեռացման որակավորմամբ չափորոշիչներին:

3. Հավելված 5.2-ի աշխատանքային փորձը բաժնում նշված է միայն գործունեության ոլորտը: Անհրաժեշտ է ներկայացնել կատարված աշխատանքների մասին տեղեկություններ:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հանձնաժողովը որոշեց՝** ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Բիդեք>> ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնի 3.1 կետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող լրացուցիչ փաստաթղթերը:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Է. Մխիթարյան

Անդամներ _____ Վ. Օհանջանյան

_____ Ա. Մարգարյան

_____ Ա. Սիմոնյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան